10. ԾՈՒԿՆԻՆ ԾԵԾԱՂԸ

Ինըմ ա, չինըմ մին շատ լուզուն սոր, խելունք տըղա յա ինըմ, ինքըն էլ ծուկնը փրոնող։

Մին օր կյետըմը թոռը քըցած ծուկուն փրոնելիս մին շատ ղաշանգյ վըեսկե ծուկըն ա փրոնըմ։

Ինքը ինքը ասըմ ա. «էս հի՞նչ լավ պեն տրեռավ։ էս ծուկնան շատ օքութ կկյա, տանիմ մըեր թաքուհուն բադարկա տամ»։ Իտի էլ անըմ ա։

Թաքուհին վեր տրեսնըմ ա էտ վըեսկե ծուկնը, էնքան ղաշանգյ, էնքան սորուն, մին ալամաթ պրե՞ն, վեր մընանը կա վեչ, տրեսալ չի ուրան գյանքըմը՞, յոր ա օնըմ, վեր միշտ եշի, քյեփը կյա, վեր օրիշնին էլ տրեսնան նախանձվին, վըեր թաքուհին իտի լավ ծուկնը օնի։

Էտ թաքուհին էտ տըղին ասըմ ա. — էս ծուկնը յըես յոր կօնիմ, քյըեզ էլ վըեսկե կըտամ, մինակ ինձ ասի, սա էքյ ա, թա վըերց։ Թա վըերց ա, պեթկը չի։

Էտ ծուկնը լըսըմ ա թա չէ, մին լավ, քա՛հ-քա՛հ ծըծաղըմ ա թաքուհուն խուսկերքին յրան։

Թաքուհին մաթ ա մընըմ, թա ծուկնը կծըծաղի՞, մին էլ ինքյը ուրան մըեչին, նըղանըմ ա, ասըմ. — էս ծուկնը հի՞նչ ա, վեր հալա յրաս էլ ծըծաղըմ ա։

Թաքուհին ըչըղվըմ ա էտ տըղին յրան, պալատան տուս քըցըմ, քյինըմ թաքավերին էլ կյենգյատ անըմ։

Թաքավերը կանչում ա էտ տղին, հարցափորց անում, ասում. — էն խե՞ յա վրեսկե ծունկնը ուրան թաքուհուն յրան ծրծաղալ, բալքյաս տընա՞ղ ա տրվալ։ Դե, շուտ ըրա ասի, թա չէ քյըեզ կախ տալ կըտամ։

Էտ տղան ասում ա. — Հինչ օգըմ ըս ըրա, ամմա ասիլ չըմ։

Թաքավերը հրամմայըմ ա կախաղանը պըղրաստին։

Էտ տղան թաքավերին ասում ա. — Թաքավերը ապրած կենա, վեր ասիմ փիշմանելու յըս, վեր ասիմ վեչ, ինձ կախաղան պըցրցընին, էլհա յըս փիշմանելու։

Թաքավերը տրեսնում ա, վեր տա մին հետամընաց խոխա չի, խելունք ա, համ էլ մին պեն՝ ա գյուդում, հրամմայըմ ա զընդանը քըցին։

Էքսը էլհա կանչըմ ա էտ տղին, ասում. — Դե մըհեգյ ասի տրեսնամ խե՞ կփիշմանիմ, վեր քյըեզ կախ տալ տամ, խե՞ իտի ըսեցեր։

Էտ տղան մին նաղլ ա ասում, էտ հարցին բադասխանին տրեղը։

Ասում ա, «ինում ա, չինում մին հարուստ մարթ։ Էտ հարուստ մարթը վրեսկավ լիքյը խուրջինը տինում ա ծիյին թամքին, ինքն էլ յրան նըստում, հրդե ինում մին հրեռե տեղ։ Շոնն էլ ընդրա հրետան ա քյինում, թըքըն-թաքուն, վեր տարը յրետ չի տա։ Ճընապարին էտ հարուստին վրեսկավ լիքյը խուրջինը եր ա ընգնում ծիյան, ինքը գյուդում չի, ծին քըշում ա, քյինում։ Շոնը էտ լոխ տրեսնում ա, հաչելավ վազ ա տամ, ծիյին առաչը ընգնում, օգըմ ա կըղնըցնի, ետ տա ընդրան։ Շատ ա հաչում, կըղկոնձում, օռնում, ամմա տարը հրսկանում չի ընդրա մեթկը, հաչա շանը յրան ըչըղվում ա, գյիդում ա, թա շոնը կըտաղալ ա, տրեռած շոն ա, շաշկավը թըխում ա, ծանգըր յարալամիշ անում, թողում, քյինում։

Շատ ա քյինում, թա խըրեգյ ա քյինում, մըթկին դոնը ընգած քյինում ա, բիրդան խուրջինը մրետրն ա քըցում, ծիյին գյավակին եշում, տրեսնում խուրջինը կա վեչ։ Օշը կըլխան ընգնում ա, աշկերը չըռում, սրերտը փըռնում, գյուդում չի, թա հինչ անի։ Ետ ա տրեռնում, մին խիլլա քյինում, տրեսնում խուրջինը ճընապարին մեչ տեղը եր ընգած, շոնն էլ տունչը տիրած յրան, սատկած։ Թաղա յա հրսկանում, թա խե՞ յա շոնը հաչալ։ Էտ մարթը ուրան արածին յրան շատ ա փիշմանում։ Լաց ա ինում, դե էլ ըշտե՞ղ, ըրածը ետ չի կյա՞լ։ Տու էլ, թաքավեր, շատ կըփիշմանիս քու ըրածիտ յրան։

Թաքավերը էլհա պեն չի կըլոխ ընգնում, ինքը ուրան ասում ա. — Էս սրամիտ, գյուգող տղին անա շատ պեն տուս կըկյա, հրամմայըմ ա էլհա տանին զընդանը քըցին։

Անց ա կենում մին քանի օր, թաքավերը հիշքան մըտածում ա, վեչ մին հընար չի քըթնում էտ տըղին սեկրետը գյիգա, էլհա հրամմայում ա ուրան կոշտը պերին էն տըղին։

Թաղաղան հարցըփորց ա անում, էտ տըղան վեչ մին պեն չի ասում, կողի թաքավերը ընդրան համ պեցուր տեղ, համ պալատըմը օգում ա կործ տա, փող, վրեսկե տա, էլհա էտ տըղան պեն չի ասում, ճարը կըտրած լհա՞ մին օրիշ նաղլ ա ասում։

«Ինում ա, չինում մին թաքավեր։ Էտ թաքավերը սիրում ար վրերսի քյինիլը, ուրան ղուզղուննին, ուրան վրերսի շընները, ուրան թեգյունքը պահողնին եր կալած։ Մի հետ տա վրերսի յա քյինում, շատ տրեսուտրեն ա ման կյամ, վրերսի շոռ կյամ, օրըն էլ արև ա ինում, տաք-կըրակ, տա շատ ա ծըրավում, ուրան թեգյունքը պահողներան մինին ասում ա, վեր մին ստաքան ճուր ճարին, ըշտըղան օգում ա ինի։ Էտ թեգյունքը պահողը ման ա կյամ, ման, ճուրչի ճարում։

Քյինում ա մին սարի տոշում տրեսնում մին քարա ճուր ա կաթում։ Ստաքանը տեմ ա անում, մին խիլլա՞ կաղնում, միչև էտ ստաքանին կեսը էտ ճըրա՞վը լըցնում ա։ Տա օգում ա, թա տանի տա թաքավերին, թաքավերըն էլ օգում ա, թա խըմի, ըիրդա՞ն ղուզղունը թևավը թըխում ա, էտ ճուրը եր ածում։ Թաքավերը կըտաղում ա, էտ ղուզղունին կըլոխը պուք տամ։

Թաքավերը մին օրիշ պալատական տըղի յա ղըրկում ճիրի։ Էտ տըղան քյինում ա ճիրի ման կյամ, տրեսնում էտ սարին կըլխան վեչ թա ճուր ա կըթկաթում, մին մեծ օցի լըղի յա կըթկաթում տրեղին ռանգյի։ Էտ տըղան տրեսածը կյամ ա թաքավերին ասում։ Թաքավերը էտ տըղին անա շունրակալ ա ինում, էն առաչին տըղին պատժում, ինքըն էլ շատ ա փիշմանում, վեր սպանալ ա ուրան գյանքը ազադող ղուզղունին։ Շատ ա փիշմանում, լա՞ց ա ինում»։

Թաքավերը վեր էտ նաղլը լըսում ա, վերչը ուրան մըթկըմը տինում ա էտ տըղին անա հեռու կըենա։ Լա՞վ մըտածելի հետի էտ թաքավերը հրամմայում ա էլհա էտ տըղին մին քանի օր ըընդանըմը պահին։ Մին քանի օրանը ետը էլհա կանչում ա էն տըղին ուրա՞ն կոշտը, էլհա օգում ա սեկրետը տուն քաշի, ամմա ա՞մա՞ լ չի կյամ։ Օգում ա էլհա կախաղան պըցրցնի։

Ամմա էտ տըղան ասում ա. — Թաքավերն ապրած կըենա, տու փիշմանիլու յըս, հունցու փիշմանալ ա էն թաքավերին տըղան, վեր դաչըմը խոխան թողալ ա ըրորոցըմը, պառավ նանին քըշտին, ինքը կընգանը նըհետ կառնավալ քյինա՞ցալ։ Մին մեծ օխծ նի յա մըտալ ակուշկավը էտ խոխին թա կոլ տա, էտ թաքավերին տըղին բուլ-

դոկ շոնը պըտրռ-պատառ ա ըրալ օխծին, ուրուրոցին քըշտին եր ածալ։ Էն պառավ նանին էլ նըստած տըեղը քոն իլած ա իլալ։

Ըտրանք վեր կառնավալան կյամ ըն, տրեսնըմ ըն ըրօրոցը առնոտ, գյիդըմ ըն, թա շոնը խոխին կերալ ա։ Թաքավերին տըղան թափանչան հանըմ ա, շոնը ըսպանըմ դաստի։ Ամմա մին խըրեգյ ետավ տրեսնըմ ըն, վեր խոխան կողի առնոտ, ամմա էն ա սաղ-սալամաթ տրեղը մըշմըշալի քոն իլած, օխծըն էլ պըտրռ-պատառ ըրած։ Ըտրեղ էտ թաքավերին տըղան էնքան փիշմանըմ ա, վեր էլ գյիդալ չը՞մ, լաց ա ինը՞մ, դե էլ ըշտե՞ղ։

Էտ լոխ վեր թաքավերը լըսըմ ա, ասըմ ա.—Ա՛յ տըղա, յրես քյրեզ սպանիլ չըմ տալ, մինակ տու էտ սեկրետը ասի։

Էտ տըղան ասըմ ա. — Թաքավերը ապրած կրենա, դե վեր էտքան ասըմ ըս, քու թաքավերական իրավունքնիտ մին սրհաթավ ինձ տո, յրես լոխ ասիմ քյրեզ։

Թաքավերը շատ ա մըտածըմ, ուրան մըթկըմը ասըմ ա. — Հինչ պիտի անի մին սրհաթըմը մին տըղա, մին սրհաթավ թաքավերութունըս տամ ուրան։

Իտի էլ անըմ ա։

Էտ տըղան հրամմայըմ ա թաքուհուն պերին կըղնըցնին, ուրան երեսուն կընեգյ ղուլլուղչոցը նըհետ։ Լոխ կյամ ըն կաղնըմ. ըտրանց դիմացը կաղնըմ ա թաքավերը։ Էտ տըղան հրամմայըմ ա լոխճին, վեր շորերնին հանին։ Թաքավերը հանըմ ա շորերը, վեր թաքուհին տրեսնըմ ա ընդրա կյեշ շանը, ծրծաղըմ ա։

Էտ տըղան հըրցընըմ ա, թա — Խե՞ յրս ծրծաղըմ։

Թաքուհին ասըմ ա. — Տըկլոր ա, ծրծաղըմ ըմ։

Էտ տըղան ասըմ ա. — Նա տըկլոր չի, քու աշկիտ ա իտի ըրվըմ, իմ վեսկե ծուկնին աշկին էլ տու վրս տկլոր ըրվացալ, էն էլ ծրծաղալ ա։

Թաքուհին հիշքան օգըմ ար ասի, հըսկըցնի, վեր ինքյը տըկլոր չի իլալ, ամա չի կյամ։

Էտ տըղան հրամմայըմ ա, վեր թաքուհին էլ շորերը հանի։ Դե թաքավերը միչև մին սրհաթը ըշըզվելի իրավունք չունի։ Թաքուհին շորերը հանըմ ա, լոխ տրեսնըմ ըն, վեր կընեգյ ա։

Հերթը հասնըմ ա էն երեսուն կընեգյ ղարավաշներին։ Ըտահանց էլ ա հրամմայըմ, վեր շորերնին հանին։ Ըտահանք օգըմ չըն, ամմա էն տըղան ասըմ ա. — Վեր շորերնիտ հանիք վեչ, ծրեզ էս սհաթիս կախ տալ կըտամ։

Ընդանք շՅրերնին հանում ըն։ Լոխ տրեսնում ըն, վեր ըտահանք լոխ տրզերք ըն։

Էտ տրղան ասում ա. — Թաքավերը ապրած կրենա, մրհեգյ եշի տրես, վեր թաքուհուն ղուլլուղչոցը վեչ մինը կընեգյ չի, տրղամարթ ա կընգա շՅրերրում։ Բա վեր իտի յա, հո՞ր ա հրրցընում. «ծուկնը էքյ ա՞, թա վրերց, թա վերց ա, օգրում չրմ»։

Ընդրա հետի էլ ծուկնը ծրծաղալ ա։

Էտ տրղան ասում ա պրրծընում, լոխճին աշկան կորչրմ։